2025

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

Քաղաքականության առաջարկ

«Լուսաստղ» ՀԿ
lusastghhk@gmail.com
+37493310608

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հապավումներ_____ 2
2. Ներածություն_____ 3
3. Գործադիր ամփոփում _____ 4
4. Խնդրի նկարագրություն_____ 5
5. Տնային ուսուցման կիրառման խնդիրներ և տվյալների բացակայություն_____13
6. Առաջարկվող լուծում _____14
7. Ակնկալվող ազդեցություն _____16
8. Եզրակացություն _____17
9. ՈՒՂԵՐՁ ԾՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻՆ_____18

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ _ Հայաստանի Հանրապետություն

ԿԳՄՍ_ Կրթության, Գիտության, Մշակույթի , Սպորտի նախարարություն

ՀՈՒԱ _ Հաշմանդամություն ունեցող անձ

ԿԱՊԿՈՒ _ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

ՀՄԿ_ Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն

ՏՄԱԿ_ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն

ԱՈՒՊ_ Անհատական ուսուցման պլան

ԱՈՒԶՊ-Անհատական ուսուցման և զարգացման պլան

1. Ներածություն

Այս քաղաքականության առաջարկը մշակվել է «Լուսաստղ» հասարակական կազմակերպության կողմից՝ ԵՄ «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում իրականացվող «Համընդհանուր ներառում 2. բյուջեից քաղաքականություն» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում: Փաստաթուղթը ուղղված է ներառական կրթության ոլորտում արձագանքման, հետադարձ կապի և հաշվետվողականության բաց համակարգի բարելավմանը՝ առաջարկելով կոնկրետ, իրագործելի և համակարգային լուծում:

Վերլուծությունն իրականացվել է բազմաղբյուր տվյալների հիման վրա՝ համադրելով Լոռու և Շիրակի մարզերում անցկացված խմբային քննարկումները, ծնողների, ուսուցիչների և դպրոցների տնօրենների արձագանքները, ինչպես նաև «ԱԴԱ» կենտրոնի շահառուների ընտանիքների բարձրաձայնած խնդիրները: Բացի դաշտային ուսումնասիրություններից, կատարվել է պետական բյուջեի վերլուծություն, որը բացահայտել է ֆինանսավորման անհամաչափությունները և դրանց ազդեցությունը ներառական կրթության արդյունավետության վրա, իրականացվել է նաև այլ կառույցների կողմից արդեն իսկ կատարված հետազոտությունների վերլուծություն :

Այս քաղաքականության առաջարկը նպատակ ունի ձևավորել համակարգային փոփոխությունների այնպիսի շրջանակ, որը կուժեղացնի պետական կառույցների, մասնագիտական համայնքի և քաղաքացիական հասարակության համագործակցությունը՝ հիմնված հստակ տվյալների, իրական շահառուների փորձառությունների և ոլորտի կարիքների խորքային վերլուծության վրա: Փաստաթուղթը նպատակ ունի նաև նպաստել ներառական կրթության արդյունավետ, կանխատեսելի և պատասխանատու կառավարման համակարգի ձևավորմանը, որտեղ յուրաքանչյուր երեխայի կարիքները դիտարկվում են ամբողջությամբ և ապահովվում են պատշաճ արձագանք:

2. Գործադիր ամփոփում

Ներառական կրթությունը կարող է լիարժեք գործել միայն այն դեպքում, երբ երեխաների, ծնողների, ուսուցիչների և մասնագետների ձայնը հասնում է համակարգին և դառնում որոշումների կայացման հիմք: Ներկայիս իրավիճակում բողոքների, հարցումների և վստահության անկումը և նվազեցնում է ներառական կրթության արդյունավետությունը:

Այս քաղաքականության առաջարկը նպատակ ունի ներդնել պետական–քաղաքացիական համագործակցության վրա հիմնված հետադարձ կապի և վերահսկողության միասնական գործիք, որը կհաստատի հստակ, թափանցիկ և հաշվետու արձագանքման համակարգ:

Առաջարկն ամբողջությամբ հիմնված է Լոռու և Շիրակի մարզերում իրականացված դաշտային ուսումնասիրությունների, ծնողների և ուսուցիչների պատմությունների, ինչպես նաև պետական բյուջեի, տարբեր կազմակերպությունների կողմից արված հետազոտությունների և այլ փաստաթղթերի վերլուծության վրա: Տվյալները ցույց են տալիս, որ ոլորտին հատկացվող զգալի ֆինանսավորումը չի ուղեկցվում արդյունավետ վերահսկողությամբ, իսկ բողոքների «կորցնելու» պրակտիկան խոչընդոտում է իրական բարելավումները:

Գործիքի ներդրման արդյունքում ակնկալվում է՝

- շահառուների բարձրաձայնած խնդիրների նկատելիորեն ավելի արագ արձագանքում,
- բողոքների գրանցման և լուծման ընթացքի ամբողջական թափանցիկություն

- ներառական կրթության համակարգի նկատմամբ հանրային վստահության վերականգնում,
- տվյալահեն քաղաքական որոշումների կայացում՝ հիմնված իրական փորձառությունների ու հաղորդված խնդիրների վրա։

3. Խնդրի նկարագրություն

Հայաստանը 2000-ական թվականներից գտնվում է համընդհանուր կրթական բարեփոխումների ուղու վրա, որի առանցքում դրված է ներառական կրթության գաղափարը։ 2004 թ. «Կրթության մասին» ՀՀ օրենքում ամրագրված ներառական կրթության սկզբունքները հիմք դարձան այն գործընթացի համար, որի նպատակն էր ապահովել յուրաքանչյուր երեխայի՝ անկախ առողջական վիճակից, սոցիալական կարգավիճակից կամ զարգացման առանձնահատկություններից, իրավունքը ստանալու որակյալ կրթություն։

2004–2014 թթ. փուլը բնորոշվում էր ներառման սկզբնական փորձերով.

- հանրակրթական դպրոցների մի հատված սկսեց ընդունել երեխաների, որոնք մինչ այդ սովորում էին միայն հատուկ դպրոցներում,
- պետությունը սկսեց ներդնել մեթոդական և մասնագիտական աջակցություն,
- իրականացվեցին ուսուցիչների վերապատրաստումներ՝ տարաբնույթ կարիքներով երեխաների հետ աշխատանքի համար։

2014–2020 թթ. տեղի ունեցան համակարգային փոփոխություններ, երբ ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ (ՀՕ-200-Ն), և Հայաստանը անցում կատարեց համընդհանուր ներառական կրթության։ Այս փուլում պետությունը պարտավորվեց ստեղծել համապատասխան պայմաններ բոլոր դպրոցներում՝ ապահովելով.

- անհատականացված ուսումնառություն,
- ենթակառուցվածքային և մեթոդական աջակցություն,
- մանկավարժահոգեբանական ծառայությունների հասանելիություն։

2020–ից առ այսօր կրթական քաղաքականությունն ընտրել է «ներառական կրթության ամրապնդման» ուղղությունը՝

- ներդրվում են ռեսուրսային դասարաններ,
- ուսուցիչների վերապատրաստումները դառնում են պարբերական,
- դպրոցները համալրվում են տեխնիկական և մեթոդական նյութերով,
- իրականացվում են ծրագրեր, որոնք խթանում են կրթության անհատական մոտեցումը։

Այդուհանդերձ «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի «Համընդհանուր ներառում. Պետական ներդրումների արդյունավետություն և հաշվետվողականություն» ենթադրամաշնորհի շրջանակներում «Լուսաստղ» ՀԿ-ն իրականացրել է ներառական կրթության պետական բյուջեի պարզեցում : Պարզեցված բյուջետային տվյալները համադրվել են դաշտային ուսումնասիրությունների, ծնողների, ուսուցիչների, մասնագետների, ինչպես նաև դպրոցների տնօրենների արձագանքների հետ:

Այս համադրված վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտելու ներառական կրթության համակարգում առկա հիմնական խոչընդոտներից մեկը՝ հետադարձ կապի և արձագանքման միասնական գործիքի բացակայությունը:

Արդյունքում՝ կրթական քաղաքականությունը հաճախ հիմնվում է ոչ թե իրական, փաստերով հաստատված կարիքների վրա, այլ ընդհանուր գնահատականների ու ենթադրությունների: Տվյալների և արձագանքման համակարգի բացակայությունը թույլ չի տալիս բացահայտել համակարգային խնդիրները, գնահատել ֆինանսավորման ազդեցությունը և ապահովել հավասարության ու ներառման սկզբունքները: Բացի այդ արձագանքման և հետադարձ կապի բացակայությունը ձևավորում է նաև մի շարք խորքային ու բազմաշերտ խնդիրներ, որոնք ուղղակիորեն ազդում են երեխաների կրթական իրավունքների իրացման վրա:

Այս ամբողջ պատկերը հաստատում է, որ առանց հետադարձ կապի, արձագանքման և քաղաքացիական վերահսկողության հիմնավորված գործիքի, ներառական կրթության համակարգը չի կարող ապահովել արդյունավետություն, թափանցիկություն և պատասխանատվություն:

3.1 Բողոքների և խնդիրների բարձրաձայնման խզված ընթացք

Շահառուների բարձրաձայնած խնդիրների զգալի մասը չի հասնում պատասխանատու մարմիններին կամ դանդաղեցնում է շարժը շղթայի տարբեր փուլերում՝ արձագանքման ընթացակարգերի բացակայության պատճառով:



Ուսումնասիրությունները ցույց տալիս, թե ինչպես են խնդիրները «կորչում» շղթայի տարբեր փուլերում: Ընդ որում խնդիրների զգալի մասը «կորչում» է ոչ միայն վարչական շղթայի ընթացքում, այլ նաև Անհատական ուսումնական պլանի (ԱՈՒՊ) մակարդակում, որը պետական մարմինների կողմից դիտարկվում է որպես հիմնական գործիքը՝ երեխայի կարիքները արձանագրելու համար:

Պաշտոնական մոտեցման համաձայն՝ բոլոր դժվարությունները, խոչընդոտները, ծառայությունների բացակայությունը և աջակցության չտրամադրումը պետք է արձանագրվեն ԱՈՒՊ-ում:
Սակայն դաշտային ուսումնասիրությունները ցույց են տվել, որ իրականում.

- ԱՈՒՊ-ները հաճախ ձևական բնույթ ունեն և չեն ներառում ծնողի բողոքները կամ ուսուցչի փաստացի դժվարությունները,
- շատ դպրոցներում ԱՈՒՊ-ը դիտարկվում է որպես «պարտադիր փաստաթուղթ», ոչ թե իրական աշխատանքային գործիք,
- ծնողները հաճախ չեն ներգրավվում ԱՈՒՊ-ի ձևավորման գործընթացում,
- ուսուցիչները չունեն բավարար ժամանակ և մեթոդական աջակցություն՝ խնդիրները փաստագրելու համար,
- ՏՄԱԿ-ի կողմից արված դիտարկումները միշտ չեն փոխանցվում ԱՈՒՊ-ում ամրագրելու համար,

- ԱՈՒՊ-ը չի հասնում նախարարություն, հետևաբար այնտեղ ներկայացված խնդիրները չեն դառնում քաղաքական որոշումների հիմք:

Այսպիսով՝ ԱՈՒՊ-ը, որը պետք է ծառայեր որպես երեխայի իրական կարիքների արտացոլման և խնդիրների գրանցման հիմնական գործիք, վերածվում է ոչ լիարժեք փաստաթղթի, որը չի ապահովում արձագանքման ամբողջական շղթա: Հետևաբար՝ ԱՈՒՊ-ում արձանագրված խնդիրները չեն փոխանցվում բարձր մակարդակ, չեն վերլուծվում, և չեն դառնում համակարգային միջամտությունների հիմք: Սա ևս մեկ անգամ հաստատում է պետական–քաղաքացիական միասնական արձագանքման գործիքի անհրաժեշտությունը:

3.2 Արձագանքման մեխանիզմների բացակաություն

Չնայած իրականացվող բարեփոխումներին, ներառական կրթության համակարգը դեռևս գործում է առանց այն հիմնարար մեխանիզմների, որոնք կապահովեին խնդիրների բարձրաձայնման, փոխանցման, արձագանքման և վերահսկողության ամբողջական շղթան: Այս բացը ձևավորվել է տարիների ընթացքում և այսօր դարձել է ոչ թե առանձին իրավիճակների, այլ համակարգային մշակույթի խնդիր:

Ներառական կրթության համակարգում չկա միասնական, պետական մակարդակով վերահստակեցված գործընթաց, որը հնարավորություն կտա՝

- հասկանալու, թե որտեղից են առաջանում խնդիրները,
- ինչ հաճախականությամբ են դրանք կրկնվում,
- ովքեր են առավել խոցելի շահառուները,
- և ամենակարևորը՝ ինչ է տեղի ունենում բարձրաձայնումից հետո:

Այդ իսկ պատճառով բողոքների մեծ մասը մնում է տեղային մակարդակում, փակված դպրոց–ծնող փոքր շրջանակում, առանց հնարավորություն ունենալու դառնալու համակարգային բարեփոխման շարժիչ:

Հայաստանի ներառական կրթության մշակույթը երկար տարիներ հիմնվել է «լուծել տեղում» մոտեցման վրա: Դպրոցները հաճախ փորձում են խնդիրները փակել ներսում՝

- ընդհանրապես չփոխանցելով տեղեկատվությունը,
- կամ փոխանցելով այն ոչ լիարժեք, ոչ փաստագրացված ձևով:

Այս երևույթը խորանում է այն իրողությամբ, որ ուսուցիչներն ու ծնողները չունեն վստահություն, թե իրենց բարձրաձայնած խնդիրն իրականում ճանապարհ ունի: Երբ պետական համակարգը չի ստեղծում լսողության մեխանիզմ, խնդիրների բարձրաձայնումն էլ դառնում է նվազող:



Այս շրջանը խաթարում է ոչ միայն երեխաների աջակցությունը, այլ նաև ամբողջ կրթական քաղաքականության արդյունավետությունը: Առանց արձագանքման մեխանիզմների պետությունը չի կարող ունենալ իրական պատկեր՝ ինչն է գործում, ինչը՝ ոչ:

Վստահության ճգնաժամը ևս խորանում է. ծնողները վախենում են բարձրաձայնել, ուսուցիչները խուսափում են բողոք արձանագրելուց, ղեկավարները փորձում են խնդիրը լուծել «խաղաղ ճանապարհով»՝ առանց գրանցումների:

Այդպես տարիների ընթացքում ձևավորվել է լուռ համակարգ, որտեղ ամեն ինչ տեսականորեն հնարավոր է, բայց գրեթե ոչինչ՝ փաստացի վերահսկելի:

Այս ամենը վկայում է, որ արձագանքման միասնական գործիքի բացակայությունը չի հանդիսանում պարզապես վարչական բաց, այլ դարձել է ներառական կրթության որակի և արդարության իրական խոչընդոտ:

3.3 Ֆինանսական անհամաչափություն և թափանցիկության խնդիրներ

Ներառական կրթության համակարգը ֆինանսավորվում է զգալի ծավալներով, սակայն բյուջեի կառուցվածքը չի համապատասխանում ոլորտի իրական կարիքներին: Պարզեցված բյուջեի վերլուծությունը ցույց է տալիս ոչ թե պարզապես թվային անհամաչափություն, այլ կորած առաջնահերթություններ, երբ ֆինանսական հոսքերը չեն հասնում այն խմբերին, որոնք առավելապես կարիք ունեն մասնագիտացված աջակցության:

Համընդհանուր ներառական կրթության ներդրմանն ուղղված բյուջեի առյուծի բաժինը՝ մոտ 3, 7 մլրդ ՀՀ դրամ կամ 97,8%-ը, հատկացված է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ԿԱՊԿՈՒ) կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումների իրականացմանը, իսկ 82 մլն. ՀՀ դրամ՝ տրամադրված գումարի 2,2%-ը, հատկացված է աուտիզմ և զարգացման խանգարումեր ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրմանը:



Այս անհամաչափությունը վկայում է ոչ միայն ռեսուրսների սխալ բաշխման, այլև համակարգի այն առանձնահատկության մասին, երբ ֆինանսական որոշումները կայացվում են առանց կարիքահեն տվյալների, առանց պարզեցված հաշվետվությունների և առանց հանրային վերահսկողության:

Ներկայիս ֆինանսական մոդելը չի տրամադրում այնպիսի թափանցիկություն, որը հնարավորություն կտար հասկանալ՝

- որքան գումար է հատկացվում յուրաքանչյուր ծառայության,
- որ ծառայություններն են առավել ֆինանսավորվող,
- և որ խմբերն են ամենաքիչը ներառված պետական ներդրումներում:

Մինչ պետությունը ներդնում է միջոցներ ենթակառուցվածքների և ընդհանուր ծառայությունների վրա, երեխաների ամենախոցելի խմբերը շարունակում են մնալ ֆինանսական անտեսանելիության մեջ: Սա ազդում է ոչ միայն ծառայությունների որակի, այլև կրթության հավասարության վրա:

3.4 Տվյալների բաց և դժվար հասանելի համակարգ

Ներառական կրթության համակարգի արդյունավետությունը կախված է այն բանից, թե որքան արագ և ամբողջական կերպով է պետությունը հավաքագրում, վերլուծում և հրապարակում տվյալները: Սակայն ներկայումս տվյալների ամբողջական հոսքը խզված է, և շահառուները մնում են տեղեկատվական մթության մեջ, որտեղ դժվար է հասկանալ ոչ միայն առանձին որոշումների տրամաբանությունը, այլև ընդհանուր քաղաքական ուղղությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պետական կառույցները չեն ապահովում հետևյալ հիմնարար տվյալների հրապարակում.

- բացակայում են նաև տվյալներ այն մասին, թե որ տեսակ հաշմանդամություն ունեցող երեխաներն են ընդգրկված կրթական աջակցություն ստացող խմբում,
- չկա փոխհամադրելի տեղեկատվություն՝ որքան երեխաներ են աուտիզմով, մտավոր կամ բազմակի հաշմանդամությամբ, և այդ խմբերից քանիսն են ստանում իրական ծառայություն,
- ինչ հաճախականությամբ են մերժվում դիմումները և ինչ պատճառով,
- որքան ժամանակ է պահանջվում բողոքների արձագանքման համար,
- ինչ խնդիրներ են առավել տարածված մարզերում,
- ինչպես է բաշխվում բյուջեն և ինչ ազդեցություն է այն ունենում ծառայությունների որակի վրա:

Այս բացը խանգարում է ոչ միայն ծնողներին ու ուսուցիչներին՝ հասկանալու, թե ինչու է որոշումը կայացվել իրենց դեպքում, այլ նաև նախարարությանը՝ ունենալ համակարգային պատկեր:
Առանց տվյալների՝

- անհնար է ձևավորել կարիքահեն քաղաքականություն,
- անհնար է գնահատել ներդրումների արդյունավետությունը,
- անհնար է կանխատեսել նույն խնդիրները տարբեր համայնքներում կրկնվում են միաժամանակ թե ոչ, որովհետև պետությունը տվյալներ չունի, չի տեսնում, որ դրանք կրկնվող, նույնատիպ, համակարգային խնդիրներ են:

Փաստորեն, տվյալների բացակայությունը ոչ միայն տեխնիկական խնդիր է, այլ պետական կառավարման թափանցիկության հիմնարար խոչընդոտ, որը դժվարացնում է վերահսկողությունն ու արգելափակում հանրային քննարկման ձևավորումը:

4. Տնային ուսուցման կիրառման խնդիրներ և տվյալների բացակայություն

Տնային ուսուցումը ներառական կրթության շրջանակում նախատեսված է բացառիկ դեպքերի համար՝ այն երեխաների, որոնք ունեն առողջական ծանր վիճակ, շարժողական խիստ սահմանափակումներ կամ բժշկական հակացուցումներ՝ դպրոց հաճախելու համար։ Սակայն «Լուսաստղ» ՀԿ-ի դաշտային ուսումնասիրությունները, ֆոկուս խմբային քննարկումները և շահառուների արձագանքները ցույց են տալիս, որ տնային ուսուցման ներկայիս կիրառությունը հաճախ շեղվում է իր իրական նպատակից և ստեղծում է ուսումնառությունից փաստացի բացառման ռիսկեր։

1. Պետությունը չունի հստակ և հրապարակային տվյալներ տնային ուսուցման մասին

Այսօր հասանելի չեն տվյալներ՝

- քանի երեխա է անցնում տնային ուսուցում,
- ինչ տեսակի հաշմանդամություն ունեն այդ երեխաները,
- արդյո՞ք որոշումները հիմնված են բժշկական ցուցումների վրա,
- որքան ժամանակ է երեխան գտնվում տնային ուսուցման մեջ,
- վերադարձե՞լ է արդյոք դպրոց, թե շարունակում է մեկուսացված ուսուցում,
- ինչ ծառայություններ են տրամադրվում տնային ուսուցման ընթացքում։

Այս տեղեկատվական բացը ցույց է տալիս, որ համակարգը չի վերահսկում տնային ուսուցման ծավալները, և չկա մեխանիզմ՝ հետևելու, թե արդյոք այն կիրառվում է որպես ընդգրկման, թե բացառման գործիք։

2. Տնային ուսուցումը հաճախ կիրառվում է որպես «թաքնված բացառման» մեխանիզմ

Ուսումնասիրությունները փաստում են, որ որոշ համայնքներում տնային ուսուցումը կիրառվում է ոչ թե բժշկական անհրաժեշտության պատճառով, այլ որպես խուսափողական լուծում, երբ դպրոցը չունի բավարար ռեսուրսներ կամ պատրաստվածություն ներառման ապահովման համար։
Արդյունքում.

- դպրոցները ծնողներին առաջարկում են տնային ուսուցում՝ դիմացը ներառման պարտավորություններից խուսափելու,

- ուսուցիչները երբեմն չեն ցանկանում աշխատել «բարդ» երեխաների հետ,
- որոշ համայնքներում տնային ուսուցումը դարձել է «հեշտ ճանապարհ»՝ ներառումը չապահովելու համար։

Սա հանգեցնում է երեխայի կրթությունից և սոցիալական կյանքից փաստացի մեկուսացման։

5. Տվյալների բացակայությունը խանգարում է քաղաքական որոշումների կայացմանը

Քանի դեռ տնային ուսուցման վերաբերյալ չկա հստակ տվյալների հավաքագրում, պետությունը չի կարող.

- գնահատել այս ինստիտուտի արդյունավետությունը,
- կանխել դրա չարաշահումները,
- հաշվարկել ծախսերի իսկական ծավալները,
- հասկանալ, թե որն է իրական կարիքը համայնքներում,
- ապահովել հավասար ընդգրկում։

Տնային ուսուցման տվյալների բացակայությունը փաստում է նաև, որ համակարգը չի տեսնում այն երեխաներին, ովքեր ամենից շատ կարիք ունեն ծառայությունների։

Տնային ուսուցումը, որը պետք է լիներ աջակցող ձևաչափ, այսօր հաճախ վերածվում է ոչ լիարժեք ներառման և բացառման հատուկ ձևի։ Առանց հստակ տվյալների, վերահսկողության և թափանցիկության՝ այս գործընթացը չի կարող լինել արդար, պատասխանատու և երեխաների իրավունքներին համահունչ։

5. Առաջարկվող լուծում

Պետական համակարգում այսօր ընդունված է կարծել, որ երեխայի կրթական դժվարությունները, կարիքները և աջակցության բացերը պետք է ամբողջությամբ արտացոլվեն Անհատական ուսումնական պլանում (ԱՈՒՊ)։ Սակայն «Լուսաստղ» ՀԿ-ի դաշտային ուսումնասիրությունները, ֆոկուս խմբերը, հարցումները և բյուջետային վերլուծությունը ցույց են տալիս մի իրականություն, որը զգալիորեն տարբերվում է պաշտոնական պատկերացումից։

ԱՈՒՊ-ը, որը կարծես պետք է լինի երեխայի կրթական ճանապարհի գլխավոր փաստաթուղթը, իրականում չի կատարում այն դերակատարումը, որը նախատեսված է օրենքով։ Այն չի ապահովում լիարժեք արձագանքման շղթա և չի երաշխավորում, որ շահառուների բարձրաձայնած խնդիրներն ու կարիքները կհասնեն համակարգի վերին մակարդակ։

Տարբեր դպրոցներում ուսումնասիրությունները բացահայտել են, որ ԱՈՒՊ-ների որակը և բովանդակությունը խիստ անհամաչափ են. մի դպրոցում այն կարող է լինել մանրամասն ու աշխատանքային, իսկ մյուսում՝ ընդամենը ձևական մի քանի կետ։ Բացի այդ, շատ հաճախ ծնողները չեն ներգրավվում դրա կազմման մեջ, ուսուցիչներն էլ չունեն բավարար ժամանակ կամ մեթոդական աջակցություն՝ իրական խնդիրները փաստագրելու համար։ ՏՄԱԿ-ի ու ՊՄԿ-ի դիտարկումները նույնպես միշտ չէ, որ ներառվում են ԱՈՒՊ-ում։

Այս ամենի հետևանքով ԱՈՒՊ-ը դառնում է հատվածական և ոչ համադրված փաստաթուղթ, որը չի արտացոլում ողջ տարվա ընթացքում առաջացած խնդիրների ամբողջական պատկերը։ Եվ քանի որ այն չի հասնում ԿԳՄՍ նախարարություն, այստեղ ներառված տեղեկությունները չեն վերածվում տվյալահեն քաղաքական որոշումների։

Ուստի առաջանում է բաց, որը ոչ ԱՈՒՊ-ը, ոչ էլ առկա ընթացակարգերը չեն լրացնում. համակարգը չունի տարեկան մակարդակով ամբողջական գնահատում՝ հիմնված բոլոր դերակատարների մասնակցության և միասնական դիտարկումների վրա։

Այս իսկ պատճառով անհրաժեշտ է ներդնել անկախ, տարեկան արձագանքման համակարգ, որը.

- մեկնարկում է ուսումնական տարվա ավարտին,
- հնարավորություն է տալիս ծնողներին, ուսուցիչներին, ՏՄԱԿ/ՊՄԿ մասնագետներին և դպրոցներին ներկայացնել իրենց համատեղ դիտարկումները,
- ամբողջացնում է տարվա ընթացքում առաջացած բարդությունները և հաջողությունները,
- հավաքագրում է իրական, ոչ ձևական տվյալներ։

Այդպիսով՝ ստեղծվում է ամբողջական, հավաստի և համադրված տեղեկատվական պատկեր, որն արդեն կարող է ծառայել որպես ազգային մակարդակի տվյալների հիմք՝ քաղաքական որոշումներ, ֆինանսական բաշխումներ և ծրագրային բարեփոխումներ իրականացնելու համար։

Անկախ արձագանքման համակարգը ոչ թե փոխարինում է ԱՈՒՊ-ին, այլ լրացնում այն և վերացնում նրա սահմանափակումները։
Այն ապահովում է բոլոր դերակատարների ձայների հավասար ներառում և ձևավորում այնպիսի տվյալների բազա, որը չի «կորչում» որևէ փուլում և վերջապես հասնում է որոշումներ կայացնող մակարդակ։

Վերջին հաշվով՝ այս համակարգը դառնում է այն օղակը, որը տարիներ շարունակ բացակայում էր. ազգային կրթական քաղաքականությունը վերջապես սկսում է կառուցվել ոչ թե ենթադրությունների, այլ իրական, համադրված և վստահելի տվյալների վրա։

6. Ակնկալվող ազդեցություն

Առաջարկվող անկախ և միասնական արձագանքման համակարգի ներդրումը կարող է էապես փոխել ներառական կրթության ընթացիկ և երկարաժամկետ որակը՝ ստեղծելով ավելի թափանցիկ, պատասխանատու և տվյալահեն միջավայր։ Այս փոփոխությունը կանդրադառնա ինչպես երեխաների կրթական իրավունքների իրացման վրա, այնպես էլ համակարգի կառավարման մշակույթի բարելավմանը։

1. Թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում

Նոր համակարգը հնարավորություն կտա առաջին անգամ պետական մակարդակով տեսնել՝

- որքան խնդիր է բարձրաձայնվում իրականում,
- ինչ փուլերում են դրանք կորչում,
- որտեղ են առաջանում խոչընդոտներ,
- ինչ արձագանք է տալիս համակարգը։

Փակ դռների հետևում գործող գործընթացները կդառնան բաց՝ ապահովելով հանրային վերահսկողություն և պետական կառույցների իրական հաշվետվողականություն։

2. Շահառուների վստահության աճ

Ծնողները, ուսուցիչները, ՏՄԱԿ/ՊՄԿ մասնագետները և դպրոցները վերջապես հնարավորություն կունենան համոզվելու, որ իրենց ձայնը ոչ միայն լսվում է, այլև վերլուծվում ու դառնում է փոփոխությունների հիմք։
Այս մոտեցումը.

- նվազեցնում է վախը բողոքարկումից,
- բարձրացնում է վստահությունը դպրոցական և պետական կառույցների նկատմամբ,
- ստեղծում է համագործակցության և փոխադարձ հարգանքի միջավայր։

3. Երեխաների կրթական իրավունքի իրական պաշտպանություն

Անհատական պատմությունները, որոնք տարիներով կորչում էին տարբեր վարչական մակարդակներում, այլևս չեն անտեսվի։
Համակարգը թույլ կտա.

- հայտնաբերել այն երեխաներին, որոնք դուրս են մնում աջակցությունից,
- արագ արձագանքել վտանգավոր կամ սխալ գնահատված իրավիճակներին,
- ապահովել, որ յուրաքանչյուր երեխա ստանա իր իրավունքով հասանելի աջակցությունը։

Այսպիսով, բարձրաձայնված խնդիրները վերջապես կվերածվեն իրական միջամտությունների։

4. Տվյալահեն քաղաքականության ձևավորում

Ուսումնական տարվա ավարտին հավաքագրված համադրված տվյալները հնարավորություն կտան նախարարությանը.

- հասկանալու համակարգային դաշտային պատկերը,
- բացահայտելու մարզային անհավասարությունները,
- գնահատելու ֆինանսավորման ազդեցությունը,
- պլանավորելու բյուջեն ըստ իրական կարիքների։

Այսպիսով՝ կրթական քաղաքականության հիմքում կհայտնվեն ոչ թե ենթադրություններ, այլ ճշգրիտ, համադրված և ամբողջական տվյալներ։

5. Քաղաքացիական վերահսկողության ամրապնդում

Գործիքը կստեղծի շարունակական հանրային ներգրավվածություն.

- ՀԿ-ները կկարողանան վերահսկել արձագանքման գործընթացը,
- համայնքային կառույցները կհետևեն տեղական խնդիրներին,
- շահառուները կդառնան քաղաքական գործընթացի անմիջական մասնակիցներ։

Սա կնպաստի այնպիսի մշակույթի ստեղծմանը, որտեղ պետությունը բաց է, իսկ հասարակությունը ակտիվ և պահանջատեր։

6. Աշխատանքի արդյունավետության բարձրացում դպրոցներում և մասնագիտական կենտրոններում

Տարվա վերջում ստացված տվյալները.

- կօգնեն դպրոցներին վերանայել իրենց մեթոդները,
- կբարձրացնեն աջակցող մասնագետների աշխատանքի որակը,
- կբացահայտեն թիմային աշխատանքի բացերը և կխթանեն համագործակցությունը,
- հնարավորություն կտան ՏՄԱԿ/ՀՄԿ կառույցներին բարելավել ծառայությունների տրամադրումը։

Այս փոփոխությունները կբարձրացնեն կրթության ընդհանուր որակը։

7. Եզրակացություն

Ներառական կրթության քաղաքական դաշտում այսօր կանգնած է մի հիմնական հարց. արդյո՞ք համակարգը կարողանում է տեսնել և լսել այն մարդկանց, ում համար իրականում գործում է։ Մեր իրականացրած վերլուծությունները ցույց են տալիս, որ կրթական միջավայրը գնալով զարգանում է, սակայն նրանից բացակայում է այն առանցքային բաղադրիչը, որը ցանկացած որակյալ համակարգի հիմքն է՝ կարգավորված, շարունակական և բոլորի համար հասանելի արձագանքման մշակույթը։
Առաջարկվող մեխանիզմը միտված է լրամշակելու հենց այդ կորցրած օղակը։ Այն հնարավորություն է ստեղծում ոչ թե պարզապես հավաքելու տեղեկություն, այլ՝ հասկանալու իրական խնդիրները, տեսնելու նոր միտումներ, կանխելու կրկնվող իրավիճակները և ձևավորելու ավելի արդար և համաչափ աջակցական միջավայր երեխաների համար։
Այս մոտեցումը նպաստում է, որ քաղաքական որոշումները հիմնվեն ոչ թե ընդհանուր պատկերների կամ ենթադրությունների վրա, այլ՝ այն փորձառությունների, որոնք ունեն իրական մարդիկ՝ ծնողներ, ուսուցիչներ, դպրոցներ և աջակցող ծառայություններ։
Ներկայացված առաջարկը միավորում է ոլորտի բոլոր դերակատարներին՝ ստեղծելով համագործակցության շրջանակ, որտեղ յուրաքանչյուրի ձայնը դառնում է կարևոր էություն, իսկ հավաքագրված տվյալները՝ հանրային արժեք։ Դա այն հիմքն է, որի վրա հնարավոր կլինի կառուցել կայուն, կանխատեսելի և իրապես ներառական կրթական համակարգ։

ՈՒՂԵՐՁ ԾՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻՆ

Ստորագրահավաք՝ ներառական կրթության արձագանքման և հետադարձ կապի միասնական համակարգի ներդրման համար

Հարգելի՛ ծնողներ, խնամակալներ, ուսուցիչներ և շահագրգիռ հանրություն,

Մենք բոլորս ուզում ենք նույն բանը՝ մի համակարգ, որտեղ յուրաքանչյուր երեխայի կարիքը հասկանալը և լսելը առաջնահերթություն է, ոչ թե փաստաթղթային ձևականություն։
Սակայն այսօր բազմաթիվ ծնողների պատմությունները, դպրոցների և մասնագետների արձագանքները ցույց են տալիս մեկ շատ պարզ ճշմարտություն.
երեխաների խնդիրները հաճախ չեն հասնում այնտեղ, որտեղ պետք է, և չեն դառնում լուծման պատճառ։

Խնդիրները մնում են դպրոցում, կամ միայն ասվածի մակարդակում, կամ թղթի վրա, բայց չեն բարձրանում համակարգային մակարդակ, չեն հասնում ԿԳՄՍ նախարարություն, չեն դառնում քաղաքական որոշումների հիմք։

Այս իրավիճակը փոխելու համար մենք՝ «Լուսաստղ» ՀԿ-ն, առաջարկում ենք ներդնել պետական–քաղաքացիական միասնական արձագանքման և հետադարձ կապի գործիք, որի միջոցով՝

- **յուրաքանչյուր ծնող,**
- **յուրաքանչյուր ուսուցիչ,**
- **յուրաքանչյուր աջակցող մասնագետ,**
- **յուրաքանչյուր դպրոց**

կարող է ուսումնական տարվա ավարտին տալ իր գնահատականը երեխայի կրթական ընթացքի և առաջացած խնդիրների վերաբերյալ։

Սա անկախ մեխանիզմ է, որը լրացնում է ԱՈՒՊ-ը, բայց չի փոխարինում նրան։ Այն թույլ է տալիս, որ ոչ մի բառ, ոչ մի բողոք և ոչ մի դիտարկում չկորչի ճանապարհին։
Սա այն գործիքն է, որը մեզ անհրաժեշտ է, որպեսզի.

- ✓ **երեխաների խնդիրները դառնան տեսանելի,**
- ✓ **ծառայությունները դառնան հասանելի,**
- ✓ **որոշումները դառնան արդար,**
- ✓ **և համակարգը դառնա լսող ու պատասխանատու։**

Ինչու է կարևոր ձեր ստորագրությունը

Քանի դեռ պետությունը չի ներդրել այս գործիքը, մեր ձայները մնում են տարածքային մակարդակում։
Ստորագրելով այս նախաձեռնությունը՝ դուք աջակցում եք այն համակարգին, որը կօգնի.

- ✓ **ապահովել, որ ցանկացած խնդիր գրանցվի և ստանա ընթացք,**
- ✓ **որ նախարարությունն ունենա իրական տվյալներ,**
- ✓ **որ երեխաների իրավունքները պաշտպանված լինեն ոչ թե բառերով, այլ գործերով,**
- ✓ **որ ոչ մի ընտանիք չմնա միայնակ դպրոցական կամ կառավարչական խնդիրների առջև։**

Այս ստորագրահավաքը մեր համատեղ ուղերձն է պետությանը.
մենք ուզում ենք լսող, արդար, թափանցիկ և պատասխանատու ներառական կրթական համակարգ։

Ձեր ձայնը կարևոր է

Յուրաքանչյուր ստորագրություն ապացույց է, որ ծնողները պահանջում են իրական փոփոխություն, ոչ թե կիսատ լուծումներ։
Յուրաքանչյուր ստորագրություն ուժ է տալիս երեխաների ավելի պաշտպանված և արժանապատիվ կրթական կյանքին։
Յուրաքանչյուր ստորագրություն ցույց է տալիս, որ մենք միասին կարող ենք ձևավորել այն համակարգը, որը մեր երեխաները արժանի են ունենալ։

Ստորագրի՛ր — և դարձի՛ր ձայն այն երեխաների, որոնք այսօր չունեն լսող համակարգ։

Ստորագրի՛ր — և միացի՛ր փոփոխությանը։

Ստորագրի՛ր — և ուժ տուր արդարությանն ու հավասարությանը։